

Four poems of Marine Petrossian, in Armenian original, from her book
Հայաստանի ծովափին, 2006

ՄԵՏԱՖԻԶԻԿԱ

հայր մեր, ասեցի
բայց չթողեց շարունակեմ

տարօրինակ ա
ես երբեք չեմ ասում՝ հայր մեր

երեւի երազ էր
կամ էլ շփոթվել էի որ փաստորեն կար

հայր մեր, ասեցի
բայց հարցս ոնց որ գիտեր

take it easy

ասեց ու գնաց

ՏԱՆՁԵՐ

ցուրտը տարածվում ա
պահարանիս կողքի
անկյունային հատվածից

դրա համար էլ
չնայած ձմեռը վերջացավ
հիմա
ավելի ա ցուրտ

ասեցի սենյակս փոխեմ
հետո հասկացա որ
ցուրտը կապ չունի
սենյակի հետ

ինքն ավելի շատ կապ ունի
տարօրինակ համով
էն տանձերի հետ
որ անցած աշնանը
առա

ու հիմա տարբերակ չկա
որ ցուրտը դադարի
որովհետեւ էդ տանձերը
ես կերել եմ

ու ոչ մի տարբերակ չկա
որ էդ տանձերը
ես կերած չլինեմ

ԱԼԻՍՆ ՈՒ ԳՆԱՑՔԻ ՍՈՒԼՈՑԸ

մի դույլ հեղուկ
ոչ մի բաժակ
մի քիչ մտածեցի
խմեցի ձեռքերով
բայց ոչինչ չփոխվեց
նույն սենյակն էր
ու նույն դուռը
որով ներս էի եկել
մի քիչ մտածեցի
դուրս էկա փողոց
անձրեւ էր գալիս
ու ոչ ոք չկար
մի քիչ քայլեցի
արեւ դուրս էկավ
ու դարձավ լրիվ անհավատալի
բայց իրական էր ամեն ինչ
ոնց որ գնացքի սուլոցը
ինչ անենք որ
գնացքը չկա

ՈՒՐԻՇՆԵՐԸ

ուրիշները
արդեն քայլել են
էս ձյունի
վրայով

բայց չկան
հիմա
մոտերքում

մենակ էս
ձյունը որ դեռ գալիս ա
ու ծառերը

բայց սրանք
ուրիշ չեն

ուրիշը
պետք ա հարց տալ
կարողանա